ժամանակ այս լեռը ծածկուած ըլլայ բազմութեամբ հաստաբուն ծառոց, վասն զի փորելով գետինը այլ և այլ կամուրջներ շինելու համար, գտնուեցան ծառի բազում կոճղներ, որոնք կը ստուգեն այն կարծիքն թէ ատենօք Մոնսընիի անտառներով ծածկուած ըլլայ, և ապա կրակով մոխիր դառնալով այն ծառերն՝ ասկէ առաջ եկած ըլլայ իր անունն Mons Cinisium որ նշանակէ լեառն մոխրոյ, որ և հաւանական է։

Առաջիկայ պատկերն ահա նոյն վերասացեալ կամուրջներէն մին կը ներկայացնէ։ Մեկնելով 'ի Սուզայէ, Մոնսընիի ճամբան ուղղի նախ դէպ արևմուտք անդր քան զԿրույլիապո, ապա կը շեղի դէպ 'ի հիւսիս, յետոյ դէպ 'ի Սան Մարդինո, Մոլարէդդո, և Պարտ։ Պարտէն անդին բացուի աչաց առջին Ս. Նիկոլայոսի դաշտագետինը, և անոր բարձանց միոյն վրայ կայ այս մեր ներկայ կամուրջն, որ հոն եղած ուրիշ կամրջաց մէջ թերևս ամենէն ճարտարաշէնն է։ Այս կամուրջէն քիչ անդին սանդղանման ճանապարհ մը կայ որ կը տանի 'ի Ս. Խաչ, և հոնկէց կը տեսնուի Մոնսընիի տափարակ գագաթը։ Այս տափարակին մեծագոյն մասը գրաւեալ է լճէ մը՝ որ երկու հազարամեղր երկայնութիւն, մէկ հազարամեղր լայնութիւն, և շատ տեղ մինչև 30 մեղր խորութիւն ունի։ Իսկ մակերևոյթը գրեթէ ձմեռուան մեծագոյն մասը թանձրը սառով պատած է։

ՊՐԷԶԻԼ. — Կը գրէ տեղական օրագիր մը թէ 160,000 Գերմանացւոց և 100,000 Անգղիացւոց և բազմաթիւ Բորդուգալաց գաղթականութեանց թուոյն վրայ պէտք է յաւելուլ հիմա և 100,000 Բիեմոնդեցիներ։ Այս ժողովուրդը կտրիճ աշխատաւոր է և ընտիր գաղթականութիւն կը ձևացնէ։ Տեղւոյս օդոյն ընդելանալն իրենց համար շատ դիւրին է, և առանց դժուարութեան կը սորվին Բորդուգալաց լեզուն, իրենց լեզուին հետ ունեցած մեծ նմանութեան պատճառաւ։ Կը բնակին Պրէզիլի հարաւային և ամենէն առողջ կողմը։

ԳԱԼԻՖՈՐՆԻԱ. — Քսան տարի կայ որ Ս. Փրանկիսկոս խեղճ գեղ մ'էր Մեխիգոյի մէջ. իսկ այս օրուան օրս ծովային ու վաճառականական մեծ քաղաք մ'է Խաղաղական ծովուն արևմտեան ափանցը վրայ։ Ցամին 1859, 83,000 բնակիչ կը համրէր, իսկ մինչև ցամին 1867 եղաւ 131,000. որոց 3600ը Զինացիք են, կը գտնուին նաև Հրեայք։ 1866 տարւոյն յունիսի 30էն մինչև 1867 տարւոյն յունիսի 30, 710 փայտաշէն և 340 քարաշէն տունք կառուցան։ Ճարտարարուեստութիւնը մեծաքայլ կը յառաջադիմէ. ունի երկու մեծամեծ բրդի գործարան և մէկ բամբակի։ Ունի դարձեալ 11 մեծ աղօրիք, 14 ձուլարան և գործարան մեքենայից, 10 սապոնի գործարան, 24 քարաձիւթոյ։ Քաղքին եկամուտն է 1,623,000, իսկ ծախքը 1,437,000 տոլլար։ Կան քաղաքին մէջ 101 եկեղեցական, 409 փաստաբան, շատ մը ոգեղէն ըմպելեաց խանութ, 12 երկաթուղւոյ ընկերութիւն, 109 ուրիշ ծանուցեալ ընկերութիւնք, 17 գիծ շոգեմուղ նաւուց և 58 օրագիր։

ԼԱԲՈՆԱՑԻՔ։ — Լուտերական Լաբոնացւոց աչքերը աւելի մեծ են քան զյունակրոն Լաբոնացւոց. մարմիններն աւելի հուժկու և իմացողութիւններն աւելի զօրաւոր։ Այս առաւելութեան պատճառն թերևս այն է որ սոնք բոլոր տարին միս կ'ուտեն, մինչդեռ յունակրոն Լաբոնացիք շարունակ պաք ու ծոմ կը պահեն։

Ամառնային եղանակին Լաբոնացիք շարունակ ոտքի վրայ են։ Այս եղանակիս մէջ Լաբոնիա ուղևորող ճանապարհորդք կ'ընտրեն աւելի գիշերը ճանապարհորդել քան թէ ցորեկը, որովհետև այսպէսով ազատ կ'ըլլան թէ՛ սաստիկ ջերմութենէ և թէ մժեղներէ։ Ամենայն ժամ հաւասարապէս գործածելի է. ինչպէս հասարակ օրուան նոյնպէս և հասարակ գիշերուան մէջ լոյս է, վասն զի արեգակը հորիզոնէն չի մեկնիր։ Այսպէսով Լաբոնացիք գրեթէ ամենևին չեն հանգչիր ամառը. և եթէ հարցուի իրենց թէ երբ կը գտնան քնանալու ժամանակ, կը պատասխանեն թէ՝ « Մենք ձմեռը շատ կը քնանանք և ամառը կ'աշխատինք բոլոր տարւոյն համար »։

ԱՄԷՈՒԹԵԱՆ ԿՂԶԻՔ. — Այս կղզիներն որ թուով 100 կը համրուին, Քամչեադքայի արևմտակողմը կ'իյնան, Ամերիկոյ սահմանաց մօտ, անոր համար և ոմանք Ամերիկոյ մէկ մասն կը համարին։ Այս կղզեաց մէջ երևելին է Պէհրինկ, ուր նաւաբեկե-

11030385

ցաւ յամին 1741 Պէհրինկ անունով ծովաչուն։

Այս կղզեաց վրայ մինչև հիմա քիչ ծանօթութիւն ունէինք, բայց վերջերս Ամերիկացի ճանապարհորդ մը Այլ անուն, ուղևորելով այն կղզեաց մէջ յաջողութեամբ 'ի գլուխ տարաւ իր քննութիւններն։ Գտաւ հոն ուրիշ բաներէն զատ շատ մը նախապատմական բնակչաց հետքեր և մնացորդներ. ինչպէս կանթեղներ, կտրոցներ, պատառաքաղներ, նետի ծայրեր, կրակարաններ և կմախքներ։

Հին բնակութեանց տեղերը պտըտելով՝ թաղման այլևայլ կերպերու հետքեր գտաւ։ Մէկ քանի կողմեր զառ 'ի վայր քարաժայռի տակ՝ տեսակ մը այրեր ձևացած էին, որոց մէջ կային այլևայլ դիակներ բոլորովին անարատ վիճակի մէջ, հարուստ զգեստներով զարդարուած, յորոց ոմանք բոլորովին ծածկուած էին տեսակ մը փայտաշէն ամանի մէջ։ Այս այրերն յիրաւի թէատրոնական տեսիլ մը կ'ընծայեն մէջի գտնուած մարմնոց այլևայլ դրից պատճառաւ։ Անք՝ իրենց ունեցած արուեստին ձևովը դրուած են, կամ որսալու և կամ ուրիշ դրից մէջ։ Իսկ կանայք կամ մորթերը կրելու կամ կտրելու և կամ տղաքնին բազկաց մէջ կրելու դրից մէջ։ Պատին երկայնութեամբը ծերերն դրուած են թմբուկ զարնելու դրից մէջ, վասն զի թմբկահարութիւնը ծերոց արուեստն էր։

Մարդասիրական արշաւանք ի Բեհեռացին սառոցաց։ — Քանի մը տարի կայ որ ուսումնական հետազօտութեանց համար դէպ 'ի Բևեռ գնացող ուսումնական ընկերութեանց մէկքանին, Ամերիկեանն, Շուեդականն և Աւստրիո-Հունգարականն, ամենայն պատրաստութեամբ երթալով իրենց ազատ ընտրութեամբը՝ հոն կը ձմերեն անհանդուրժելի ցրտութեան մէջ։ Բայց անցեալ տարի ըստ սովորութեան, Նորվեկիացի այլևայլ ձկնորսաց նաւակներ այն կողմերն գնացած ըլլալով՝ յանկարծակի սառերէն կը պաշարուին և չեն կրնար իրենց հայրենիքը դառնալ։ Եւ ցաւալին այն կ'ըլլայ որ այն խեղճ նաւաստիներն 'ի մերձենալ ձմեռան սովորած ըլլալով առանձնանալ Նորվեկիոյ նաւահանգիստներն, հայթայթած չեն ըլլար առաջուց ոչ կերակուր և ոչ ըզգեստ ընդդէմ ցրտութեան բևեռային ձմեռան։ Բայց իրենց այս խեղճ վիճակը հայրենակցաց սիրտը շարժելով, որոնք թէպէտ յոյս չունէին թէ պիտի կարենան ազատել զիրենք, այնու հանդերձ տէրութեան միջնորդութեամբը փութացին նաւ մը խաւրելու, պատուիրելով որ փորձ փորձէ մատենալ խեղճ ձկնորսաց գտնուած տեղը։ Բայց այս նաւը յետ բազում ջանից չկարենալով մերձենալ նոյն տեղը՝ ստիպուեցաւ ետ դառնալ։

Այլ գործը յուսահատական չերևցաւ քաջասիրտ մարդկանց առջին. ուստի դեկտեմբերի 24ին խարիսխ վերուց 'ի Դրոմսէօք առուգաստաւոր պզտի նաւ մը, տասը աներկիւղ նաւաստիներով. դնելով 'ի մտի հաստատապէս դիմագրաւել ընդդէմ ամենայն վտանգաց, սառուցի, մառախլոյ և բևեռային գիշերաց մթութեան և ազատել խեղճ ձկնորսները։

Ասոնց ողորմ վիճակը 'ի գութ շարժեց և մղեց 'ի գործ Պրեմայի բևեռային Մասնաժողովն իսկ։ Իրաւ է որ այս Մասնաժողովոյն գլխաւոր նպատակն է գիտութիւն, բայց նոյն գիտութեան ալ հիմն դրած է զսէր մարդկութեան։ Այս Մասնաժողովը՝ որուն Նախագահն է Ալբերտոս Ռոդէնդալ, կրէլանտիա անունով նաւ մ'ունի, ուստի հրամայեց մէկէն պատրաստել նոյն նաւը, առանց սպասելու լուր մ'առնելու 'ի Դրոմսէօք մեկնած միւս պզտի նաւուն վրայօք։ Մէլսոմ նաւապետն ինքնակամ ընծայեց զինքը այս յանդուգն գործոյն, միայն ուշացաւ մեկնելու մինչև այս ընթացող տարւոյս յունուարի վերջը, վասն զի ընդհանուր հաշուով կ'իմանար որ մինչև նոյն ատեն այն խեղճ նաւաստիներն յետին վտանգի մէջ չէին կրնար ըլլալ։

Եթէ այն խեղճ ձկնորսները չկարենային ալ ազատիլ 'ի մահուանէ, այնու հանդերձ այս Մասնաժողովոյն ցուցած քաջասրտութիւնն և անշահասիրութեան հոգին չեմք կրնար ըստ բաւականին գովել, որ նշան է թէ գերմանական գիտութեան ճշմարիտ աթոռը նոյն ժողովրդեան սրտին մէջն է, և թէ չեն պարծիր ամբարտաւանութեամբ մտաւոր գիտութեան վրայ, առանց առաքինութեան հետ միաւորելու զայն։

Աւստրիա։ — Կը գրեն Աւստրիոյ օրագիրք թէ Հրէից թիւը օր օրուան վրայ անիմանալի արագութեամբ կ'աճի Աւստրիոյ և Գերմանիոյ մէջ։ Արդէն այսօր Վիեննա քաղաքը եօթը կամ ութ հոգւոյ վրայ մէկ Հրեայ կը համրէ։ Ուրեմն Աւստրիա — Հունգարական մայրաքաղաքին մէջ հարիւր հազարէն աւելի Հրեայ կայ։

— Մորաւիոյ մէջ Բրոնից քաղքին բնակչաց մեծագոյն մասը Հրեայ է. բազմութիւն՝ որուն ոչ մէկ տեղւոյ Հրէից թիւն կրնար հաւասարիլ, ոչ Գաղղիոյ, ոչ Անգղիոյ և ոչ Իտալիոյ։